պահպանված լինելու փաստերի ապացուցման բեռը կրել է պատասխանողը, որն ապացուցել է վերոնշյալ հանգամանքների առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի համաձայն՝ գնումների հետ կապված վեճով վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին, և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքը, իսկ հայցը ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատական այլ ծախսեր չկան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԷՅԷՄ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հ.Հակոբյանի՝ 19.09.2023թ. թիվ 113-Ա/3 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ 02.04.2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**